

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

13.09.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Հ. Եղիազարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Ներսիսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Անհատական բնակարանային շինարարության մասին» Ձև ԱԲՇ վիճակագրական միանվագ հետազոտության հարցաթերթի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Մ.Պետրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Անհատական բնակարանային շինարարության մասին» Ձև ԱԲՇ միանվագ հետազոտության հարցաթերթը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 4 (տարեկան), Ձև 38 (տարեկան), Ձև 34 (տարեկան), Ձև 61ա (տարեկան), Ձև 88 (ամսական, եռամսյակային, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի մի շարք արձանագրային որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 4 (տարեկան), Ձև 38 (տարեկան), Ձև 34 (տարեկան), Ձև 61ա (տարեկան), Ձև 88 (ամսական, եռամսյակային, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին»: Սույն որոշումները ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատվելուց և սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի սեպտեմբերի 28-ի՝ Ձև թիվ 4 (տարեկան), Ձև թիվ 38 (տարեկան), Ձև թիվ 34 (տարեկան), Ձև թիվ 61ա (տարեկան), Ձև թիվ 88 (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվությունները և թիվ 22, թիվ 39, թիվ 29, թիվ 32 և թիվ 35 արձանագրային որոշումները:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2012 թվականի օգոստոսի 20-ից 24-ը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Թվինինգ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Գյուղատնտեսական համատարած հաշվառում» Բաղադրիչի շրջանակում ուսուցողական այցելությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ.Անանյան, Ա.Ավագյան, Լ.Գրիգորյան/

3.2. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2012 թվականի օգոստոսի 22-ից 24-ը TAİEX ծրագրի շրջանակում Դանիայի վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Տրանսպորտի վիճակագրություն» թեմայով ուսումնական այցելությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ. Թորոսյան, Ա.Ներսիսյան, Հ. Եղիազարյան/

3.3. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2012 թվականի օգոստոսի 20-ից 24-ը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Թվինինգ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Որակի կառավարում» A5.2 Բաղադրիչի շրջանակում ուսուցողական այցելության վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Լ. Պետրոսյան, Լ. Հարությունյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

12.10.2012թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա.Առուշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա.Հակոբյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ.Վարդանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը համաձայն հավելված-1-ի:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Թայլանդի Բանգկոկ քաղաքում 2012 թվականի օգոստոսի 27-ից օգոստոսի 29-ը Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «Աղքատության կրճատման համար քաղաքական ռեֆորմների և ազդեցությունների գնահատումը» խորագրով ուսուցողական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Առուշանյան/

2.2. Հաղորդում՝ Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում 2012 թվականի սեպտեմբերի 11-ից 13-ը Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Միջին Ասիայի /ԱԵԿՄԱ/ երկրների համար կազմակերպված «Ջրերի վիճակագրություն» խորագրով բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

2.3. Հաղորդում՝ Մակեդոնիայի Սկոպյե քաղաքում 2012 թվականի սեպտեմբերի 19-ից 21-ը Եվրոպական բնապահպանական գործակալության կողմից կազմակերպված ԵՀՔ նախագծի իրականացման առաջնայնության՝ Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգի /ԲՏՄՀ, ENPI-SEIS/ տվյալների բազայի կառավարման և տվյալների փոխանակման ձևաչափերի օպտիմալացման վերաբերյալ սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա.Հակոբյան/

2.4. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2012 թվականի սեպտեմբերի 26-ից 27-ը «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» ծրագրի նախագծի քննարկման նպատակով ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ռ.Վարդանյան/

2.5. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքում 2012 թվականի հոկտեմբերի 3-ից 5-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության կողմից կազմակերպված «Վիճակագրական տվյալների արտադրության գործընթացի մոդերնիզացում» թեմայով բարձր մակարդակի սեմինարին և հոկտեմբերի 5-ի ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 48-րդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ս.Մնացականյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

3. ««Ժամանողի հարցում» և «Մեկնողի հարցում» դիտարկման հարցաթերթերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Ջեկուցող՝ Բ. Պողոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Ժամանողի հարցում» և «Մեկնողի հարցում» դիտարկման հարցաթերթը համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի, ինչպես նաև «Ժամանողի հարցում» և «Մեկնողի հարցում» դիտարկման հարցաթերթերի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 3-ի:

/Անհատական/